«Աւետիս Մարգարեան Մամիղոնեանց», բնագրի ներքին մասում թվարկված են Ղարաբաղի հինգ մելիքները՝ Գյուլիստանի մելիք Հովսեփի որդի մելիք Աբովը, Խաչենի մելիք Միրզախանի որդի մելիք Ալավերդին, Վարանդայի մելիք Հուսեինի որդի մելիք Շահնազարը և Դիզակի մելիք Բախտամը:

Կարծում ենք, որ Ավետիս Մամիկոնյանցի կողմից «Աշխարհացույց Հայաստանեայց»-ի ու ռուսերեն թարգմանված նրա պատճենի մատուցումը Ալեքսանդր Առաջին ռուսաց ցարին սովորական նվիրատվություն չէր: Ռուսական զորքերն այդ ժամանակ արդեն Ռուսաստանին էին միացրել Արևելյան Հայաստանի մի մասը՝ Լոռի-Փամբակը, Շիրակը, Սյունիքն ու Արցախը և պատրաստվում էին գրավելու նաև Երևանի ու Նախիջևանի խանությունները: Իրեն Ղարաբաղի ազնվական հայերի շառավիղ համարող Ավետիս Մամիկոնյանցը, որ այնքան խնամքով կատարել է քարտեզի պատճենահանման ու թարգմանության գործը, թվարկել Ղարաբաղի մելիքների անունները ու նրանց տիրույթները, ըստ երևույթին ցարի առջև կամեցել է բարձրացնել հայ իշխանների իրենց իրավունքների մեջ վերականգնելու հարցը, գուցե և նրա ծրագրերը ավելի լա՞յն են եղել, բայց այդ հետաքրքրական հարցերը դեռևս կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության:

В. Р. ГРИГОРЯН

## «КАРТА АРМЕНИИ» ШААМИРА ШААМИРЯНА

### (Резюме)

В 1778 г. в типографии армянских мхитаристов Венеции, по заказу Ш. Шаамиряна, возглавлявшего патриотическую группу торговой буржуазии индийских армян в Мадрасе, вышла шестая по счету армянская печатная карта под заглавием—«Карта Армении» (первая армянская карта напечатана в 1695 г. в Амстердаме), которая до сих пор не только не подверглась всестороннему исследованию, но и почти осталась в неизвестности.

Опубликование карты носило политический характер. Ш. Шаамирян и его единомышленники, мечтая об освобождении Армении из-под турецко-персидского владычества и создании буржуазной республики, как известно, развернули широкую агитацию. Они издали в Мадрасе «Новую книгу, называемую увещеванием» Мовсеса Баграмяна, призывавшего армянскую молодежь к вооруженной борьбе за освобождение родины, и проект конституции будущей Армении Ш. Шаамиряна—«Западню честолюбия».

«Карта Армении» фактически является приложением к этим книгам. Она дополняет их, позволяет получить более широкое представление об Армении и сопредельных странах. Сравнение показало, что составители карты имели под рукой также карту Армении, опубликованную в Венеции в 1751 г. Этой картой пользовался также М. Баграмян при изложении раздела исторической географии в своей «Новой книге». Мадрасские патриоты, может быть и сам Ш. Шаамирян, работали над